ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թ. հունվարի 10-ին, N 9-Ա Ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասով, 222-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 224-րդ հոդվածով, 226-րդ հոդվածով, 227-րդ հոդվածով, 228-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության աշխատակիցների կողմից 2023թ. հունվարի 5-ին ՀՀ Արագածոտնի մարզի «Բյուրականի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ /այսուհետ՝ Դպրոց/ այցելելու արդյունքում կազմված արձանագրությունն այն մասին, որ Դպրոցում աշխատանքային ժամին որևէ գործընթաց չի իրականացվել՝ աշխատողների բացակայության պատճառով, ինչպես նաև հաշվի առնելով Դպրոցի տնօրեն Լ. Մկրտչյանի /այսուհետ՝ Տնօրեն/ ներկայացրած բացատրագիրը և այն, որ հայտնաբերված փաստով առկա է Տնօրենի մեղքը՝ ուսումնական հաստատությունում աշխատողների կողմից ներքին կարգապահական կանոնների և

աշխատանքային ռեժիմի պահպանման նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու հարցում, ուստի

որոշում եմ

1. ՀՀ Արագածոտնի մարզի «Բյուրականի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լուսինե Մկրտչյանին հայտարարել նկատողություն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու հիմքով:
2. Սույն որոշման մասին տեղեկացնել Լ. Մկրտչյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում Լ. Մկրտչյանին ծանուցման օրվան հաջորդող օրվանից:
4. Որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 1/10/2024 10:06:56 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ